

Սասուն Լ. Սարիբեկյան  
*Աշխարհագր. գիտ. թեկնածու*

## ԱՂԱՆԴՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ\*

**Բանալի բառեր** – աղանդ, ամբողջատիրական աղանդ, համաշխարհային մաստնություն, աշխարհաքաղաքական գործառույթ, աշխարհաքաղաքական գործակալ, Նոր աշխարհակարգ, հակաքրիստոնեություն, կրոնների միավորում, կրոնական ինտերվենցիա, գիտակցության վերահսկողություն, «Նոր դար», «Եհովայի վկաներ», մորմոններ:

**Աղանդների աշխարհաքաղաքական ուսումնասիրության կարևորությունը բացատրվում է հատկապես հետևյալ իրողություններով.**

– դրանք աշխարհաքաղաքական կարևոր ակտորներ են<sup>1</sup>, որոնց գործունեությունը ուղղված է ազգերի ինքնիշխանության և պետությունների անկախության դեմ,

– հետսառըպատերազմյան աշխարհում գնալով մեծանում է աղանդների ազդեցությունը աշխարհաքաղաքական գործընթացների, պետությունների ու էթնոսների մրցունակության, խոցելիության, անվտանգության ու զարգացման վրա,

– աղանդների աշխարհաքաղաքական հետազոտությունների արդյունքները կարևոր նշանակություն կարող են ունենալ աշխարհաքաղաքական կարևոր այլ ակտորներին (պետություններ, էթնոսներ, միջազգային կազմակերպություններ, գաղտնի կազմակերպություններ և այլն), ինչպես նաև աշխարհաքաղաքական տարածության ենթակարգային տարամակարդակ միավորներին վերաբերող տեսական–մեթոդաբանական և գործնական խնդիրների արդյունավետ ուսումնասիրության համար:

**Աղանդը՝ 1. ընտրված ուսմունքի հավատքով ինքնակամ հիմունքներով միավորված, որպես կանոն մեկուսացված, համընդհանուր նպատակների, նորմերի նկատմամբ ընդդիմադիր, նույնիսկ թշնամական, խարիզմայի ճանապարհով արժեքների և նորմերի սեփական**

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.02.2015:  
 1 Տե՛ս Желтов В. В., Желтов М. В. Геополитика: история и теория: Учебное пособие. М., 2009, с. 353-357.

համակարգը ստեղծող և այն միակ ճիշտը համարող ոչ ինստիտու- ալիզացված, համախմբված սոցիալական խումբ է, 2. տվյալ հասարա- կությունում իշխող եկեղեցուն և աշխարհիկ իշխանությանը իրեն հաճախ հակադրող կրոնական կազմակերպության տեսակ է, որը բնութագրվում է սեփական դոկտրինաների, արժեքների և դերի բա- ցառիկության հավակնություններով, ընտրված լինելու տրամադրու- թյուններով, բարոյական ինքնակատարելության ձգտումներով, կար- գադրված նորմերի ու հրահանգների խիստ պահպանմամբ, իր բոլոր անդամների հավասարության ընդգծմամբ և քահանայության ինս- տիտուտի ժխտմամբ<sup>2</sup>:

Ընդհանրապես տարաբնույթ ակտորների (նաև աղանդների) աշ- խարհաքաղաքական ուսումնասիրություն նշանակում է դրանք ուսում- նասիրել համաշխարհային տարածության և դրա բաղադրիչների նկատ- մամբ ազդեցության ու դրա համար մրցակցության տեսանկյունից, այ- սինքն՝ պարզել, թե դրանք ինչ դեր ունեն աշխարհագրական տարածու- թյան ենթակարգային տարամակարդակ միավորներում (համաշխար- հային տարածություն, մակրոտարածաշրջաններ, պետական տարածքներ և այլն) տարաբնույթ ակտորների (պետություններ, էթնոսներ, միջազգային կազմակերպություններ, գաղտնի կազմակերպություններ, ֆինանսական հսկայական կարողությամբ ընտանիքներ և այլն) ազդեցության ու դրա համար մրցակցության (համաշխարհայնացում, տարածաշրջանացում, աշխարհաքաղաքական էքսպանսիա, մրցակցություն, հարաբերություն- ներ և այլն) բնութագրի վրա:

Տարաբնույթ ակտորների (նաև աղանդների) աշխարհաքաղաքական ուսումնասիրության համար առանձնահատուկ նշանակություն ունի աշ- խարհակարգի ու պետությունների աշխարհաքաղաքական հիմնական բնութագրիչների (աշխարհաքաղաքական ռեսուրսներ, հզորություն, իրա- դրություն, անվտանգություն, հարաբերություններ, մրցունակություն, զար- գացում) վրա դրանց ազդեցության ուսումնասիրությունը:

Աղանդները խիստ բացասական և վտանգավոր աշխարհաքաղաքա- կան գործառույթներ ունեցող ակտորներ են: Սրանց իրական «առա- քելության» մասին հիմնականում ձևավորված են աղոտ պատկերացում- ներ, մասնագետների՝ համաշխարհային մասոնության հետ սրանց առն- չությունների նկատմամբ անուշադրության կամ դրանք ներկայացնելուց խուսափելու պատճառով: Մինչդեռ, **աղանդների մեծ մասը (մասնա- վորապես առավել ազդեցիկներն ու տարածվածները) ստեղծվել է համաշխարհային մասոնության կողմից կամ (և) գործում է նրա վերահսկմամբ և ուղղորդմամբ ու ծառայում է վերջինիս աշխարհա- քաղաքական նպատակի իրագործմանը՝ աշխարհի կրոնները մա- սոնական միասնական մտածողության սկզբունքների հիման վրա միավորելու և աշխարհի կառավարություն ստեղծելու միջոցով՝ նոր աշխարհակարգի հաստատմանը:** Հատկապես 20–21–րդ դարերի հա- մաշխարհային մասշտաբի գրեթե բոլոր գործընթացների ձևավորման ու զարգացման մեջ էական է եղել այս կրոնի (մասոնությունը սատա- նայապաշտություն է՝ լյուցիֆերականություն, հակաքրիստոնեու-

2 Sևո Социологический энциклопедический словарь. На русском, английском, немецком, французском и чешском языках. Редактор–координатор Г. В. Осипов. М., 2000, с. 314.

թյուն<sup>3</sup>) մասնակցությունը: Որ շատ կարևոր է, գնալով մեծանում է վերջինիս ազդեցությունը համաշխարհային քաղաքական, կրոնական, մշակութային ու տնտեսական կյանքի վրա: Այս կազմակերպությունը իր ստեղծած ինչպես կրոնական, այնպես էլ տնտեսական ու քաղաքական կազմակերպությունների (նաև գաղտնի՝ «**Բիլդերբերգերի ակումբ**», «**Հոռնի ակումբ**», «**Եռակողմ հանձնաժողով**» և այլն) միջոցով հսկայական ազդեցություն ունի ժամանակակից աշխարհաքաղաքական գործընթացների ու աշխարհի իրադրության վրա<sup>4</sup>: Այս կամ այն պետության վրա նրա ազդեցությունը դրսևորվում է ոչ միայն դեպի այդ պետությունները աղանդներ ուղղորդելով և ոչ այնքան երկրի բնակչության մեջ մասնության հետևորդների թվով, որքան տվյալ պետական կառավարման համակարգում դրանց ներգրավվածությամբ՝ գործադիր և օրենսդիր իշխանություններ ներթափանցմամբ, բարձրաստիճան պաշտոնյաների մասոնացմամբ, այդ գործակալ-պաշտոնյաների (հաճախ նախագահներ, վարչապետեր, նախարարներ) միջոցով պետություններին քաղաքական գլոբալ նպատակներ հետապնդող այս կրոնի շահերին ենթակա օրենքներ պարտադրելով ու դրանց նկատմամբ տնտեսական (մասնավորապես ֆինանսական) և քաղաքական լծակների կիրառմամբ:

Այդուհանդերձ, աղանդները իրենց հակապետական, հակազգային, հակաքրիստոնեական և կրոնների միավորմանն ուղղված գործունեությամբ համաշխարհային մասոնության Նոր աշխարհակարգի հաստատման նպատակի իրագործման ճանապարհին կարևոր խնդիրներ են լուծում:

Տարբեր երկրներ կրոնական կազմակերպությունների ներթափանցումը (ներխուժումը) կրոնական կամ հոգևոր ինտերվենցիա է, մշակութային-գաղափարական կամ սոցիալական-մշակութային էքսպանսիայի տարատեսակ: Ընդ որում, սրանք գրանցվում են ոչ միայն որպես կրոնական, այլև հասարակական կազմակերպություններ: Պատահում է նաև, որ ընդհանրապես չեն գրանցվում և իրենց գործունեությունը իրականացնում են անօրինական ձևով:

Որպես կրոնական ինտերվենցիայի օբյեկտներ՝ աղանդների և դրանք ուղղորդող գաղտնի կազմակերպությունների համար կարևոր են հատկապես այն երկրները, որոնք աշխարհաքաղաքական հետաքրքրություն են ներկայացնում (դրանք, ինչպես և դրանց տիտղոսակիր էթնոսները աշխարհաքաղաքական կարևոր ակտորներ են կամ կարող են այդպիսին լինել, այդ երկրներն ունեն աշխարհաքաղաքական առանձնահատուկ դիրք ու գործառնություններ), էթնիկական ու կրոնական խայտաբղետությամբ աչքի չեն ընկնում, որտեղ սոցիալական ինտեգրմանը չի խանգարում բնակչության էթնիկական և կրոնական կազմը, որտեղ չկա կրոնական ինտերվենցիայից պաշտպանող օրենսդրություն և որտեղ իրականացվում է պետական (մասնավորապես՝ տնտեսական և սոցիալական) սխալ քաղաքականություն, ու դրա արդյունքում ձևավորվում են աղանդներին տրվելու սոցիալ-հոգեբանական նախադրյալներ՝ գործազրկություն, ինքնադրսևորման հնարավորության բացակայություն, աղքատություն, անխնամություն, միայնություն, անմխիթար վիճակ, դեպրեսիա:

3 Տե՛ս **Քահ Կ.**, Աշխարհի գրավման ճանապարհին / թարգմ. **Հ. Բողրոմյան**, Եր., 2008, էջ 109–115:  
 4 Տե՛ս նույն տեղում, էջ 47–57:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄԸ  
 Ե (ԺԳ) ԳՐԱՅԻՆ ԹԻՎ 1 (49) ԽՈՒՎԱՐ-ՄԱՍՈՐ, 2015  
 ՎԷՆ ԿԱՐԱՎԱՐՈՒՄԻ ԿԱՆՈՆԵՆ

Տարբեր երկրներ աղանդների ներխուժմանն ու գործունեությանը օժանդակում են միջազգային կազմակերպությունները: Դրանք այս կամ այն երկրին միջազգային հանրությանը ինտեգրելու, նրա զարգացմանը օժանդակելու խոստումներ տալով ու նրա մոտ առանց այդ կազմակերպություններին ու դրանց կողմից ներկայացված կոնվենցիաներին միանալու՝ զարգացման ու անվտանգության ապահովման անհնարինության գիտակցություն ու միջազգային հանրությունից մեկուսացված մնալու վախ ձևավորելով՝ ստիպում են ստորագրել միջազգային կոնվենցիաների տակ և դրանց սկզբունքներն ու նորմերը պարտադրում նրան: Աղանդները, իրականում ունենալով մարդու իրավունքներին հակասող ուսմունքներ, տարբեր երկրներ են ներթափանցում՝ հենվելով համաշխարհայնացման գործընթացի իրագործման համար անհրաժեշտ իրավական միասեռ դաշտի խիստ կարևոր մասը համարվող խղճի, խոսքի ազատության և այլ իրավունքների վրա: Տարբեր երկրներում դրանց հաստատվելու և գործելու հնարավորություններ ընձեռող սկզբունքներ և նորմեր ներառող միջազգային կոնվենցիաներն են՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և Երեխայի իրավունքների մասին կոնվենցիաները: Մարդու իրավունքների պաշտպանության գաղափարի ներքո տարբեր երկրներում կայանալով և ինքնահաստատվելով, մարդկանց իրենց գոհերը դարձնելով՝ սրանք պաշտպանում են միայն իրենց շահերը:

Աղանդները, թափանցելով պետական մարմիններ, կազմակերպում են դավադրություններ, իրականացնում արտերկրյա լրտեսություն, հետևորդների մեջ սերմանում կրոնական ատելություն և անհանդուրժողականություն այն միջավայրի ավանդական կրոնների, այն պետության ավանդույթների, խորհրդանիշների ու ինստիտուտների նկատմամբ, որտեղ հայտնվել են, ոտնահարում են քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, հետևորդներին ապակողմնորոշում, մեկուսացնում, խզում նրանց սոցիալական կապերը, չեզոքացնում հասարակությունում նրանց ունեցած կենսականորեն կարևոր սոցիալական ակտիվությունը, նրանց վերածում տվյալ հասարակության համար ոչ պիտանի (սոցիալապես անակտիվ) անդամի, նրանց նկատմամբ կիրառում հոգևոր անհարկություն, բռնություն, նրանց մեջ սերմանում բռնատիրական հայացքներ, քայքայում ընտանիքներ, խաթարում առողջություններ (նրանց ուսմունքներում և մեթոդներում հաճախ գործածվում են հոգեկան առողջության տեսակետից վնասակար և մարդու կամքն ու ազատությունը ոտնահարող տարրեր) և այլն: Այսինքն՝ երկրի բնակչությունը մասնատելով ու նրա որակը գցելով՝ աղանդները խիստ բացասական են ազդում նրա աշխարհաքաղաքական հարաբերությունների, իրադրության, անվտանգության, զարգացման, մրցունակության, հզորության, ռեսուրսների ընդհանրական բնութագրի վրա, մասնավորապես, մեծացնում են պետության աշխարհաքաղաքական խոցելիությունը, փոքրացնում պետական սահմաններից դուրս ազդեցության և այլ ակտորների կողմից կիրառվող էքսպանսիայի տարբեր տեսակների դեմ արդյունավետ հակակշիռների ապահովման նրա հնարավորությունները:

Կարևոր են կրոնական ինտերվենցիայի՝ որպես աշխարհաքաղաքա-

կան մրցակցության միջոցի մասին գիտնականների, քաղաքական ու պետական գործիչների այն դատողությունները, որոնք դարձել են աշխարհաքաղաքական ծրագրերի մաս կամ ազդել դրանց բովանդակության վրա, կամ էլ ահագանգում են այլ պետությունների կողմից իրենց երկրների նկատմամբ իրականացվող կրոնական ինտերվենցիայի, դրավտանգավորության մասին:

Մասնավորապես, Ռուսաստանին կեղծ արժեքների միջոցով հաղթելու, ոչնչացնելու մասին է ամերիկյան ԿՀՎ-ի գեներալ Ա.Դալեսի ծրագիրը, որը մասնավորապես ասում է. «**Ռուսաստանում քառս սերմանելով, մենք աննկատելիորեն կփոխարինենք նրանց արժեքները կեղծով և կստիպենք նրանց հավատալ այդ կեղծ արժեքներին: Ինչպես: Մենք հենց Ռուսաստանում կգտնենք մեր գաղափարակիցներին, մեր օգնականներին և կողմնակիցներին ...**»<sup>5</sup>:

ԱՊՀ երկրների վրա կրոնական հարձակման կրեդոն այսպես է ձևակերպել Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Գորդոն Միլթոնը. «**Կապիտալիզմին անցնելու շրջանում մարդկանց սրտերը կարող են նվաճվել հյուսիսամերիկյան և արևմտաեվրոպական ավետարանչությամբ**: Նա համարում է, որ «**արմատական բողոքական ուսմունքը Ռուսական Ուղղափառ եկեղեցու համեմատ առավել շահավետ վիճակում է գտնվում, քանի որ այն ավելի է կազմակերպված և ավելի լիարժեք է օգտագործում տեխնիկայի և տեղեկատվության ժամանակակից միջոցները**»<sup>6</sup>:

ԱՄՆ-ի կողմից ԱՊՀ-ի յուրաքանչյուր դպրոցի համար «քրիստոնեության» դասավանդման ուսուցիչների պատրաստման և մինչև 2000թ. վերջը 200 հազար ավետարանական եկեղեցիներ բացելու նպատակի մասին է Սանկտ-Պետերբուրգի և Լադոգայի Հովհան (Մնիչով) պատրիարքին հղված ՌԴ Գերագույն Խորհրդի խղճի, դավանանքի ազատության, գլխության և բարեգործության Հանձնաժողովի նախագահ Վ.Պոլսինի նամակը. «**ԱՄՆ-ը նախատեսում է 11-12 հազար ուղղափառ եկեղեցիների փոխարեն ստեղծել 200 հազար ավետարանական համայնքներ՝ նպատակ ունենելով «կապիտալիստական» հոգեբանություն և կոսմոպոլիտիզմ դաստիարակել: Ըստ էության, սա գաղափարական և հոգևոր ինտերվենցիա է, որն արդեն սկսված է**»<sup>7</sup>:

Աղանդների մեջ իրենց վտանգավորությամբ առանձնանում են տոտալիտար (ամբողջատիրական) աղանդները (ապակառուցողական պաշտամունքները): Դրանք այն աղանդներն են, որոնք խախտում են իրենց անդամների իրավունքները և վնաս հասցնում նրանց՝ «գիտակցության վերահսկողություն» կոչվող որոշակի մեթոդների օգտագործման ճանապարհով<sup>8</sup>: Սրանք, սակայն, իրարից տարբերվում են իրենց յուրահատուկ բացասական բնութագրերով, ինքնակազմակերպման և զարգացման, աշխարհաքաղաքական տարածության ենթակարգային տարբեր միավորներում իրենց ազդեցության և ինքնահաստատման հնարավորու-

5 Кривальская Н. В. Секта: Угроза и поиск защиты. М., 1999, с. 152.

6 Նույն տեղում, էջ 59:

7 Նույն տեղում, էջ 55:

8 Տե՛ս ԴՎորկին Ա. Տոտալիտար աղանդներ (դասակարգումը, հայտանիշները, մեթոդները), աղանդների ուսումնասիրության «Տեղեկագիր» մատենաշար (II գիրք), Եր., 2001, էջ 46:

ՎԷՆ ԿՐԻՎԱԼՅԱԿՍԿԱՅԱ ԿՆՅԱՆՆԵՐԻ, ԶՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱՅՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԴԱՐՁԵԼ ԵՆ ԱՇԽԱՐԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍ ԿԱՄ ԱԶԴԵԼ ԴՐԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ԿԱՄ ԷԼ ԱԿԱԳԱՆԳՈՒՄ ԵՆ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԵՆՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱԳՎՈՂ ԿՐՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆԿԻԱՅԻ, ԴՐԱՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՏԱ, ՌՈՍԱՍՏԱՆԻՆ ԿԵՂԾ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԽԱՂԹԵԼՈՒ, ՈՇՆՉԱԳՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ Է ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿՀՎ-Ի ԳԵՆԵՐԱԼ Ա.ԴԱԼԵՍԻ ԾՐԱԳԻՐԸ, ՈՐԸ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՏԱ ԱՍՈՒՄ Է. «ՌՈՍԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՌՍ ՍԵՐՄԱՆԵԼՈՎ, ՄԵՆՔ ԱՆՆԿԱՏԱՆԵԼԻՈՐԵՆ ԿՓՈՒՍԱՐԻՆԵՆՔ ՆՐԱՆՑ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԿԵՂԾՈՎ ԵՆ ԿՍՏԻՊԵՆՔ ՆՐԱՆՑ ԽԱՎԱՏԱԿ ԱՅԴ ԿԵՂԾ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ: ԻՆՉՊԵՍ: ՄԵՆՔ ԽԵՆՑ ՌՈՍԱՍՏԱՆՈՒՄ ԿԳՏՆԵՆՔ ՄԵՐ ԳԱՂԱՓԱՐԱԿԻԿՆԵՐԻՆ, ՄԵՐ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՆ ԿՈՂՄՆԱԿԻԿՆԵՐԻՆ ...»<sup>5</sup>:

ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ՎՐԱ ԿՐՈՆԱԿԱՆ ԽԱՐԾԱԿՄԱՆ ԿՐԵՂՈՆ ԱՅՍԱՊԵՏ Է ՁԼԱԿԵՐԱԿԵԼ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԽԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐ ԳՈՐԴՈՆ ՄԻԼՅՈՆՆԸ. «ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՆ ԱՆԿՆԵԼՈՒ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ՍՐՏԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՆՎԱՃՎԵԼ ԽՅՈՒՍԻՍԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՆ ԱՐՆՄՏԱՆԵՎՐՈՎԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆՉՈՒԹՅԱՄԲ»: ՆԱ ԽԱՄԱՐՈՒՄ Է, ՈՐ «ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՈՍՄՈՒՆՔՐ ԸՌՈՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՄԵՄԱՏ ԱՌԱՎԵԼ շԱԽԱՎԵՏ ՎԻՃԱԿՈՒՄ Է ԳՏՈՆՎՈՒՄ, ՔԱՆԻ ՈՐ ԱՅՆ ԱՎԵԼԻ Է ԿԱԳՄԱԿԵՐԱՎՎԱԾ ԵՆ ԱՎԵԼԻ ԼԻԱՐԺԵՔ Է ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻԿ ԻՄԻՋՈՑՆԵՐԸ»<sup>6</sup>:

ԱՄՆ-Ի ԿՈՂՄԻՑ ԱՊՀ-Ի յՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԴԱՊՐՈՑԻ ԽԱՄԱՐ «ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ» ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՍՏՈՑԻՅՆԵՐԻ ՎԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՆ ՄԻՆՉՆ 2000Թ. ՎԵՐՋԸ 200 ԽԱԳԱՐ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ ԲԱԿՏԵԼՈՒ ՆՎԱՏԱԿԻ ՄԱՍԻՆ Է ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵՆ ԼԱԴՈԳԱՅԻ ՀՈՎԽԱՆ (ՄՆԻՉՈՎ) ՎԱՏՐԻԱՐՔԻՆ ԽՂՎԱԾ ՌԴ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐԻՐՈՂԻ ԽՂՃԻ, ԴԱՎԱՆԱՆՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ, ԳՂԹՈՒԹՅԱՆ ԵՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՆԾՆԱԺՈՂՈՎԻ ՆԱՄՍԱԳԱՑ Ԏ.ՊՈԼՍԻՆԻ ՆԱՄԱԿՐ. «ԱՄՆ-Ը ՆԱՄՍԱՏԵՍՈՒՄ Է 11-12 ԽԱԳԱՐ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՓՈՒՍԱՐԵՆ ՍՏԵՂԾԵԼ 200 ԽԱԳԱՐ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԽԱՄԱՅՆՔՆԵՐ՝ ՆՎԱՏԱԿ ՈՒՆԵՆԵԼՈՎ «ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ» ԽՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԿՈՍՄՈՊՈԼԻՏԻԶՄ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼ: ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ, ՍԱ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՆ ԽՈԳԵՆՈՐ ԻՆՏԵՐՎԵՆԿԻԱ Է, ՈՐՆ ԱՐԴԵՆ ՍԿՍՎԱԾ Է»<sup>7</sup>:

ԱՂԱՆԴՆԵՐԻ ՄԵՋ ԻՐԵՆՑ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՆՃԱՆՈՒՄ ԵՆ ՏՈՒՏԱԼԻՏԱՐ (ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ) ԱՂԱՆԴՆԵՐԸ (ԱՎԱԿԱՌԱՍՏՈՂԱԿԱՆ ՎԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԸ): ԴՐԱՆՔ ԱՅՆ ԱՂԱՆԴՆԵՐՆ ԵՆ, ՈՐՈՆՔ ԽԱՄՏՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՆ ՎՆԱՍ ԽԱՍԿՆՈՒՄ ՆՐԱՆՑ՝ «ԳԻՏԱԿԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԽՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ԿՈՉՎՈՂ ՈՐՈՇԱԿԻ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՃԱՆԱՎԱՐԻՈՎ<sup>8</sup>: ՍՐԱՆՔ, ՍԱԿԱՅՆ, ԻՐԱՐԻՑ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ յՈՒՐԱԽԱՏՈՒԿ ԲԱԿՏԱՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐՈՎ, ԻՆՔՆԱԿԱԳՄԱԿԵՐԱՄԱՆ ԵՆ ԳԱՐԳԱԿՄԱՆ, ԱՇՋԱՐԽԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ ԻՐԵՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՆ ԻՆՔՆԱԽԱՍՏԱՏՈՒՄԱՆ ԽՆԱՐԱՎՈՐՈՒ-

թյուններով: Ամբողջատիրական աղանդներից աշխարհաքաղաքական ամենամեծ նշանակությունն ունեն հատկապես «Նոր դարը», «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցին» (մորմոնները), «Դիտարանի ընկերություն»-«Եհովայի վկաները», «Մայենթոլոգիայի եկեղեցին», «Միավորման եկեղեցին» (Մունի աղանդը), «Կրիշնա գիտակցության ընկերությունը», «Տրանսցենդենտալ մեդիտացիան», որոնց ազդեցությունը ազգամիջյան և միջպետական մրցակցության ու ձևավորվող աշխարհակարգի վրա թեև շատ մեծ է, սակայն՝ տարբեր:

Առավել ազդեցիկ ամբողջատիրական մի քանի աղանդների աշխարհաքաղաքական համառոտ բնութագրի միջոցով փորձենք ներկայացնել խիստ վտանգավոր այդ կառույցների աշխարհաքաղաքական նշանակությունը:

Աղանդների մեջ իր բացառիկ «առաքելությունն» ունի «Նոր դար» («Նոր դարաշրջան», «Նոր ժամանակաշրջան», «Հոլիստիկ», «Ջրհոսի դարաշրջանի», «Ամբողջականության») շարժումը, որը տարատեսակ աղանդավորական (մասնավորապես ամբողջատիրական) խմբերի համադաշնություն է<sup>9</sup>: «Նոր Դար» անվանումը ծառայում է որպես մի ընդհանուր տանիք, որով բնութագրվում են բոլոր կազմակերպությունները: Մրա կրոնը համաստվածությունն է և միաձուլում է մի քանի հավատալիքներ՝ օկուլտիզմը, արևելյան գուրունների ուսմունքները, կարմային օրենքներն ու վերամարմնավորումը, ինչպես նաև պանթեիզմի և մոնիզմի վրա հիմնված կարևոր արևելյան փիլիսոփայությունները<sup>10</sup>: Նեղ իմաստով այն ներկայանում է որպես որոշակի գաղափարական հիմք ունեցող ընդարձակ օկուլտային նեոհեթանոսական շարժում, իսկ առավել լայն իմաստով՝ որպես ժամանակակից «հետքրիստոնեական» քաղաքակրթության գաղափարական հիմք<sup>11</sup>: Կարևոր է ընդգծել, որ ամբողջատիրական բոլոր աղանդների ուսմունքներում առկա են օկուլտային տարրերը, ինչպես նաև նոր ժամանակաշրջանի սպասումը: «Նոր դարի» մտածելակերպի լայն տարածման պատճառը բացատրող հիմնական գործոններն են՝ 19-րդ դարում տրանսցենդենտալիզմի և գիտամետաֆիզիկական մտածելակերպի ծագումը, օկուլտիզմի հանրամատչելիությունը, արևելյան փիլիսոփայությունների նկատմամբ աճող հետաքրքրությունն ու քրիստոնեության քննադատման լայն տարածումը<sup>12</sup>: Մասնագետների կարծիքով՝ «Նոր դար» շարժումը քրիստոնեության ամենավտանգավոր թշնամին է: Մասնության կողմից ստեղծված և ուղղորդվող աղանդավորական խմբերի այս համադաշնության գլխավոր «առաքելությունը» Նոր աշխարհակարգի հաստատման համար անհրաժեշտ համաշխարհային նոր կրոնի ձևավորման ճանապարհին կարևոր փուլ հանդիսանալն ու կրոնների միավորման գործընթացն առաջ տանելն է: Նոր աշխարհակարգի հաստատման համար սա ունի նաև տնտեսական

9 Տե՛ս Дворкин А.Л., Сектоведение. Тоталитарные секты. Опыт систематического исследования. Нижний Новгород, 2002, с. 492-540. Տեղեկագիր աղանդների ուսումնասիրության. «Նոր դարաշրջան» (“New Age”) շարժումը և նրա պաշտամունքները: Նյութը պատրաստեց Վ. Ասծատրյանը, Եր., 2006:

10 Տե՛ս Տեղեկագիր աղանդների ուսումնասիրության. «Նոր դարաշրջան» (“New Age”) շարժումը և նրա պաշտամունքները: Նյութը պատրաստեց Վ. Ասծատրյանը, Եր., 2006, էջ 9:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 7:

12 Տե՛ս նույն տեղում, էջ 26-27:

և քաղաքական «առաքելություններ»<sup>13</sup>: Որ «Նոր դարը» քաղաքական դավադրություն է, չեն թաքցնում հենց նորդարականները: Սատանայական այս շարժմանը նվիրված գրականությունում նրանք գրում են ամբողջ աշխարհում իշխանությունը զավթելու իրենց նպատակի մասին: «Նոր դարը» այսօր հսկայական աղեցություն ունի աշխարհում: Դրա մասին են վկայում, օրինակ, վերջինիս կողմից ՄԱԿ-ի կառույցները (մասնավորապես ՅՈՒՆԵՍԿՕ-ն) ակտիվորեն օգտագործելը և ԱՄՆ-ի բնակչության մեջ «Նոր դարով» տարվածների ահռելի թիվը:

Աշխարհաքաղաքական կարևոր գործառույթներ ունեցող աղանդ է «Նոր կրոնական շարժումներից» և ամբողջատիրական աղանդներից ամենահինը՝ «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցին» («Դատաստանի օրվա սրբեր», «Վերջին օրերի սրբեր», մորմոններ): Աստվածաբանական տեսանկյունից մորմոնական «եկեղեցին» պահպանողական բողոքականության ուսմունքից ելած գնոստիկ բնույթի, նեոհեթանոսական-օկուլտային սինկրետիկ, ակտիվ հոգեերսությանը զբաղվող հազարամյակային թեքումով աղանդ է<sup>14</sup>: Թեև կրոնների որոշ դասակարգումներում մորմոնների «եկեղեցին» դասում են քրիստոնեական կրոնների շարքը, սակայն իրականում նրանց ուսմունքն ու արարողությունները շատ հեռու են քրիստոնեությունից, ոչ մի կապ չունեն նրա հետ և ընդհանուր առմամբ մերժում են քսանդարյա քրիստոնեությունը: Մորմոնների տաճարային խորհրդանիշներն ու արարողությունները, որոնք մեծ մասամբ մասոնականի կրկնությունն են, մշակվել են 1842-ից հետո, երբ այս աղանդի հիմնադիր Ժ.Սմիթը 1200 մորմոնների հետ մուտք գործեց մասոնական օթյակ<sup>15</sup>: Մորմոնական «եկեղեցին» իր քաղաքական ազդեցությունը թողնում է նախ և առաջ ԱՄՆ պետական ապարատի պատասխանատու պաշտոնները զբաղեցնող անդամների միջոցով: Մեծ թվով մորմոններ աշխատում են ԱՄՆ դաշնային հաստատություններում, այդ թվում նաև՝ դիվանագիտական ծառայության մեջ, ԿՀՎ-ում, ՀԴԲ-ում, զինված ուժերում և այլուր: Աշխարհաքաղաքական տեսանկյունից շատ կարևոր է նաև, որ միասնական «Ազգաբանության համաշխարհային կենտրոնի» վերահսկողությունն իրականացնում է «Վերջին օրերի սրբերի» կազմակերպությունը<sup>16</sup>: Ընդհանրապես սա լավագույն հետախուզական բնույթի տեղեկատվության աղբյուր է: Մորմոնների հատուկ ջոկատները բոլոր երկրներում թափանցում են պետական արխիվներ, նկարահանում փաստաթղթերի թանգարանային ու համալսարանական հավաքածուները, քաղաքային արխիվները, քաղաքացիական կարգավիճակի, եկեղեցական համայնքների մատյանները: Միսիոներական գործունեությանը զուգահեռ, այս աղանդի անդամների կողմից հավաքած նոր արխիվային անուններն ու տվյալները օգտագործվում են օկուլտային-մոգական, սարսափելի սրբապիղծ նպատակի իրագործման՝ մարդկանց հեռակա կարգով «մորմոնացնելու» համար (տարբեր ազգության, դավա-

13 Քահ Կ., նշվ. աշխ., էջ 70-80:

14 Տե՛ս Дворкин А. Л., նշվ. աշխ., էջ 66-105: Տեղեկագիր աղանդների ուսումնասիրության. «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցին» կամ մորմոնները: Նյույթը պատրաստեց Վ. Ասձատրյանը, Եր., 2002:

15 Տե՛ս Տեղեկագիր աղանդների ուսումնասիրության. «Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբերի եկեղեցին» կամ մորմոնները: Նյույթը պատրաստեց Վ. Ասձատրյանը, Եր., 2002, էջ 29:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 39:

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐՆՈՐԴԱՅԻՆ ԳՐԱՆՈՒՅԵՐ 2015  
Է (ԺԳ) Գրքի, թիվ 1 (49) հունվար-մայր, 2015  
Վե՛ս համահայկական հանդես

նանքի և համոզմունքների պատկանող միլիոնավոր մահացած մարդկանց, առանց նրանց ազգականների համաձայնությունը հարցնելու, իրենց «եկեղեցուն» անդամագրում)<sup>17</sup>: Մորմոններին կրոնական ինտերվենցիայի հնարավորություններ են ընձեռում հատկապես իրենց կազմակերպությանը անդամների կողմից ամսական վճարվող տասանորդը, նրանց պատկանող գործարանների, հանրախանութների և հյուրանոցային ցանցերի, ապահովագրական ընկերությունների, հրատարակչական կենտրոնների կողմից ձևավորված ֆինանսական հսկայական միջոցները, ինչպես նաև նրանց պատկանող հեռուստակայանների, ռադիոկայանների ու թերթերի տեղեկատվական աջակցությունը: Կրոնական ինտերվենցիան միաժամանակ այդ երկրներում տնտեսական գործունեություն ծավալելու հնարավորություններ է տալիս:

Աշխարհաքաղաքական կարևոր «առաքելություն» ունի նաև ամբողջատիրական «Եհովայի վկաներ» աղանդը (նախկին անվանումները՝ «Գրքերն ուսումնասիրողներ», «Գրքերն ուսումնասիրողների ընկերություն», «Սիոնի դիտարանի հրատարակչության ընկերություն», «Դիտարանի ընկերություն», «Նոր աշխարհի ընկերություն»): Թեև քաղաքական-մարտավարական նկատառումներից ելնելով՝ այս աղանդը իրեն քրիստոնեական ուղղություններին է դատում, ընդ որում, իրեն համարելով միակ ճշմարիտ, սակայն սրա քարոզչությունն ու գործելակերպն իրականում ոչ մի առնչություն չունի քրիստոնեության հետ, այլ ընդհակառակը, հակաքրիստոնեական է: Այս աղանդն ունի մասոնական ծագում (հիմնադիրը 33 աստիճանի մասոն 2.Ռասելն է): Սրա հիմքերն են «Յոթերորդ օրվա աղվենտիզմը», 19-րդ դարի վերջի ամերիկյան պոպուլիզմն ու աղանդի հիմնադիրների անձնական հայացքները<sup>18</sup>: Տասնյակ հազարավոր համայնքների, 200-ից ավելի լեզուներով տարեկան մի քանի միլիարդ օրինակ գիրք, ամսագիր ու գրքույկ հրատարակելու և տարածելու, գրավոր և բանավոր քարոզչության, մարդկանց զանգվածային կաշուն հոգեերսության ու այս ամենի համար ներդրվող միլիարդավոր դոլարների միջոցով այս աղանդը օժանդակում է մասոնական «Նոր աշխարհակարգ» ծրագրի իրագործմանը: Մասնավորապես, այս կազմակերպությունն իր գործունեության կարևորագույն ուղղություն է համարում ուղղափառ եկեղեցիների դեմ պայքարը<sup>19</sup> (առանց որի հնարավոր չէ աշխարհի կրոնների միավորումը): Խարխուլելով քրիստոնեության հիմքը՝ Սուրբ երրորդությունը, Եհովայի վկաները խեղաթյուրում ու նենգափոխում են Աստվածաշունչը, փորձում այն հարմարեցնել սեփական ուսմունքին ու ստեղծել համաշխարհային գաղափարախոսություն: Մատանայական են համարում ուղղափառության առանց բացառության բոլոր հիմքերը, ատելություն սերմանում քրիստոնեական ուղղափառ եկեղեցիների դեմ՝ կոչ անելով քրիստոնյաներին դուրս գալ այդտեղից: «Քրիստոնեական աշխարհի» կրոններին խոստանում են զրկել «իրենց հարստություններից» և «ամոթալի մերկացման» ենթարկել<sup>20</sup>, հայտարարում, որ «քրիս-

17 Տե՛ս նույն տեղում, էջ 38-39:

18 Տե՛ս Дворкин А. Л., նշվ. աշխ., էջ 118-120:

19 Տե՛ս Տեղեկագիր աղանդների ուսումնասիրության. «Եհովայի վկաները» կամ «Դիտարանի ընկերությունը»: Նյութը պատրաստեց Վ. Ասձատրյանը, Եր., 2001, էջ 21-22:

20 Տե՛ս «Դիտարան», 01.03.94, էջ 13:



տոնեական աշխարհը և այլ կեղծ կրոնները շուտով լիովին ոչնչացվելու են»<sup>21</sup>, և «եհովականները առաջ են ընթանում՝ ամայացնելու այսպես կոչված քրիստոնեական արոտավայրերը ...»<sup>22</sup>:

Աշխարհաքաղաքական կարևոր «առաքելություն» է նաև պետության և ազգայինի դեմ Եհովայի վկաների գործունեությունը (Նոր աշխարհակարգի հաստատման համար կարևոր խնդիրներ են պետական սահմանների ու ազգային ինքնիշխանության վերացումը): Այս աղանդը պետությունները սատանայական է համարում և քարոզում դրանց կործանվելու անխուսափելիությունը: Սրա հետևորդները հրաժարվում են պատիվ տալ ցանկացած ազգային դրոշի, մերժում են հայրենասիրությունը և սեփական երկրի պաշտպանությունը նվաճողներից, չեն ճանաչում ոչ մի իշխանություն, իրենց կազմակերպությունը համարում են միակ ճշմարիտ կազմակերպություն, միակ ճշմարիտ պետություն, իրենց ղեկավարությունը՝ միակ ճշմարիտ կառավարություն, իրենց կողմից աստվածային համարվող իրենց կազմակերպության իշխանությունը՝ միակ իշխանություն: Մի դեպքում մերժում են աշխարհը, այն համարելով սատանայի թագավորություն, մեկ այլ դեպքում՝ ողջ աշխարհը պատկերացնում որպես միասնական աստվածավարական պետություն, որի կենտրոնը Բրուքլինն է (այստեղ է գործում «Եհովայի վկաների» հոգևոր-վարչական համաշխարհային կենտրոնը՝ ղեկավար մեկուսախումբը՝ «Երկրի վրա Տիրոջ տեսանելի միջնորդը»): Սրանք սերմանում են ազգային ատելություն, վնասում ազգային ավանդական հոգեկերտվածքին ու ազգային շահերին, կոչ են անում հրաժարվել հիմնական իրավունքներից ու պարտականություններից (մասնավորապես՝ ընտանեկան), որի արդյունքում շատ են հետևորդների ընտանիքների քայքայման և ուսումնառությանը թողնելու դեպքերը, վնասում են հետևորդների առողջությանը, նրանց երեխաներին:

Կոմերցիոն այս պաշտամունքը կամ գաղափարական ուղղվածության առևտրային բուրգը (այսպես են նաև բնութագրում «Եհովայի վկաներ» աղանդը), շնորհիվ հատկապես եհովականների վճարած տուրքերի, հետևողականորեն շարունակում է կատարել իր աշխարհաքաղաքական պարտականությունը:

Ինչպես երևում է վերը շարադրվածից, աղանդների աշխարհաքաղաքական պարտականությունները թեև նման են, սակայն նույնը չեն, բայց Նոր աշխարհակարգի հաստատման գործում կարծես լրացնում են մեկը մյուսին: Պետությունների ու էթնոսների և ընդհանրապես ամբողջ աշխարհի անվտանգության ու զարգացման վրա սրանց բացասական ազդեցությունը կանխելու, վերացնելու կամ էլ փոքրացնելու համար առանձնահատուկ կարևորություն ունի մարդու իրավունքների նկատմամբ վերաբերմունքը որոշող արժեքների հստակեցումը:

Այս տեսակետից ուշադրության է արժանի մարդու իրավունքների և արժանապատվության մասին Համառուսական ազգային տասներորդ հավաքի (4-6. 04. 2006 թ.) ստեղծած փաստաթուղթը, համաձայն որի՝ «գոյություն ունեն արժեքներ, որոնք ստորադաս չեն մարդու իրավունքներից: Դրանք են՝ հավատքը, բարոյականությունը, սրբություններն ու

21 «Դիտարան», 01.05.97, էջ 17: «Դիտարան», 01.07.94, էջ 7:

22 «Դիտարան», 01.05.92, էջ 11:

հայրենիքը: Երբ այս արժեքներն ու մարդու իրավունքների իրականացումը հակասության մեջ են՝ հասարակությունը, պետությունն ու օրենքը պետք է ներդաշնակորեն միավորեն և՛ մեկը, և՛ մյուսը: Չպետք է թույլ տալ այնպիսի իրավիճակներ, երբ մարդու իրավունքների պաշտպանության իրականացումը վնասի հավատքին ու բարոյական ավանդությանը, նպաստի կրոնական և ազգային զգացմունքների, պաշտված սրբությունների վիրավորանքին ու սպառնա հայրենիքի գոյատևմանը: Վտանգավոր է նաև այնպիսի «իրավունքների» ստեղծումը, որոնք օրինական են դարձնում այն վարքագիծը, որը դատապարտվում է ավանդական բարոյականության ու բոլոր պատմական կրոնների կողմից»: Այս փաստաթուղթը նաև «մերժում է մարդու իրավունքների բնագավառում երկակի չափանիշների քաղաքականությունը, ինչպես նաև այդ իրավունքների չարաշահման փորձերը քաղաքական, գաղափարական, ռազմական և տնտեսական շահեր հետապնդելու նպատակով՝ որոշակի պատմական և հասարակական կարգ պարտադրելու համար»<sup>23</sup>:

Եվ ընդհանրապես, այն երկրներում, որտեղ կրոնական ինտերվենցիան անվտանգության և զարգացման (նաև աշխարհաքաղաքական) ապահովման գործում լուրջ խնդիրներ է ստեղծել, աղանդների վերաբերող արդյունավետ քաղաքականության համար, մասնավորապես, անհրաժեշտ է կազմակերպել կրոնական կազմակերպությունների գործունեության հետազոտություններ, մշակել ազգային արժեքներին հենվող կրոնական-հոգևոր անվտանգության հայեցակարգ, կրոնական գործունեության բացասական հետևանքները կանխող կամ մեղմացնող օրենսդրություն, կրոնական կազմակերպությունների կամ խմբերի հակօրինական գործունեությունից տուժած քաղաքացիների իրավունքները պաշտպանող ծրագիր, ստեղծել անհրաժեշտ լիազորություններով և ռեսուրսներով կրոնի ոլորտի առանձին պետական լիազոր մարմին, հասարակությանը իրազեկող, աղանդների մոլորեցնող գործունեությունը կանխող անկախ տեղեկատվական կենտրոն, հսկողության ենթարկել կրոնական կազմակերպությունների գործունեությունը (նաև տնտեսական), կազմակերպել ապակառուցողական կրոնական կազմակերպություններից տուժածների սպասարկումը:

Կրոնական ինտերվենցիայի դեմ արդյունավետ պայքարի համալիր այս միջոցառումների իրականացումը հատկապես կարևոր է Հայաստանի Հանրապետությունում, առանց որի հնարավոր չէ մեր երկրի քաղաքակրթական և աշխարհաքաղաքական անվտանգության ապահովումը:

**Սաուն Լ. Սարիբեկյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է աշխարհաքաղաքականության, սոցիալ-տնտեսական և քաղաքական աշխարհագրության տեսական-մեթոդաբանական և գործնական խնդիրները, ՀՀ բնակչության կյանքի որակի ու աշխարհաքաղաքական զարգացման ու անվտանգության հիմնահարցերը:

<sup>23</sup> Декларация о правах и достоинстве человека X Всемирного Русского Народного Собора. [www.mospat.ru](http://www.mospat.ru).

## Summary

### GEOPOLITICAL CHARACTERISTICS OF SECTS

Sasun L. Saribekyan

**Key words** – sect, totalitarian sect, global masonry, geopolitical function, geopolitical agent, New World, antichristianism, association of religions, religious intervention, mind control, “New Age”, “Jehovah’s Witnesses”, Mormons.

Sects are important actors in the geopolitics: their activities are directed against states and the ethnos because of the establishment of a very dangerous world order for them, union of religions and destruction of the Christian civilization. Separating the world population and eliminating its quality, the sects have drastically negative effect on the geopolitical resources, situation, strength, competitiveness, relations, security and development of the given country, in particular, reduces the possibility of impacting beyond the state borders and providing counter-weights against different types of expansion applied by other actors.

Totalitarian sects are of great geopolitical importance, especially the “New Age”, “The Church of Jesus Christ of Latter-day Saints” (Mormons), “Jehovah’s Witnesses”, “Church of Scientology”, “Unification Church (Sect of Mun)”, “International Society for Krishna Consciousness” and “Transcendental Meditation”.

## Резюме

### ГЕОПОЛИТИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА СЕКТ

Сасун Л. Сарибекян

**Ключевые слова** – секта, тоталитарная секта, всемирное масонство, геополитическая функция, геополитический агент, Новый миропорядок, антихристианство, объединение религий, религиозная интервенция, контроль сознания, «Новый век», «Свидетели Иеговы», мормоны.

Секты являются важными геополитическими акторами. Их деятельность направлена против государств и этносов, на установление очень опасного для них Нового миропорядка, на необходимое для этого объединение религий и уничтожение христианской цивилизации. Секты, разобщая население страны и снижая его качество, чрезмерно отрицательно влияют на следующие геополитические характеристики государства: геополитические ресурсы, ситуацию, мощь, конкурентоспособность, отношения, безопасность и развитие государства, в частности, уменьшают возможности влияния вне государственных границ и обеспечения противовесов разным видам экспансии других акторов.

Большое геополитическое значение имеют тоталитарные секты, особенно «Новый век», «Церковь Иисуса Христа святых последних дней» (мормоны), «Свидетели Иеговы», «Церковь сайентологии», «Церковь объединения» (Секта Муна), «Общество сознания Кришны», «Трансцендентальная медитация».

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՍՏՐԱԿԱՆԱԿԱՆ ԳԵՊՈԼԻՏԻԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ, 2015 թվական, հունիսի 1 (49) համար-նորմա, 2015

ՀՀ-ի հաստատված համար